1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02636688) 2016 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում ավտոկայանատեղիի վարձակալում՝ 7,333,315 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 989 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Տաթևի վերածնունդ» հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/23709-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 6-ի N 06/3-8/30266-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02636688) 2016 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ավտոկայանատեղիի վարձակալում՝ 1,700,034 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐԱՐՈՒՄ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 990 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1353-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական
կազմակերպություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/23706-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության ազդեցությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N Ե 211/16 գրությունը, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1353-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 5-րդ և 11-րդ կետի 2-րդ ենթակետերում «2016-2018թթ.» բառերը փոխարինել «2015թ. հոկտեմբերի 01 - 2018թ. դեկտեմբերի 31» բառերով.


2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 9-րդ ենթակետում «2016-2018թթ.» և «(2016 հունվար-2018 դեկտեմբեր)» բառերը փոխարինել «2015թ. հոկտեմբերի 01 - 2018թ. դեկտեմբերի 31» բառերով:

2. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված

գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1353-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվության առդիտ՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարության կողմից:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 991-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1180-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հայաստան» համահայկական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հաշվի առնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2016 թվականի
հոկտեմբերի 17-ի N ՀՀՀ. 5/27-480 գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի ««Հայաստան»
համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի թիվ 9 դպրոցի ամբողջական կահավորում»
ծրագրի մասին» N Մ-1180-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը
երկարաձգել մինչև 2017 թվականի սեպտեմբերի 5-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 992 - Ա
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «Ն.ՆԱՍԻՔՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՆՈՅՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ» ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23935-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 02/14/13290-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N ՎԿ/22.2/11203-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/31132-16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 01/21.1/4047-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 730,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Ն.Նասիքյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված՝ N ՀՀ-Կ-13/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման ծառայությունների մատուցում՝ 730,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Ց Է



«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«12» հոկտեմբերի 2016թ.

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի
մասնակի կահավորում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Անհրաժեշտ պայմաններ ստեղծել «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ում Միացյալ Նահանգներից ժամանող բարձրակարգ վիրաբույժների կողմից անվճար վիրահատություններ կատարելու համար
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաք, առողջապահության բնագավառ

Ձ. 13/1

6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 730.000,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ն
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հոկտեմբերի 10-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2016թ հոկտեմբերի 10-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 30-ը պատրաստել, գնել, տեղափոխել և անհատույց տեղադրել 7 հատ դեղորայքի պահարան 730.000,00 դրամ արժեքով:
10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից 7 հատ դեղորայքի պահարանների պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 730.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության հարկադրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընթացակալային եւ ամփոփ հաշվետվություններով:

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակցանք

Արմինա Դարբինյան



Ձ. 13/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 993 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23910-16, Հայաստանի Հանրապետության աշխարհների և սցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N ՏԲ/ԱՆՄ-2-1/9664-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 06/3-8/31325-16 եզրակացությունները, **ո. ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Հայ մշակութային ֆոնդի կողմից Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի (269 տեղ, 2,706 կգ ընդհանուր քաշով, 1,125 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,150 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է անհատույց բաշխելու զինծառայողներին, ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից ազատամարտիկներին և Տավուշի ու Վայոց Ձորի մարզերի սահմանամերձ համայնքների բնակիչներին:

2. Հայ օգնության միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխարհների և սցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի և Վայոց Ձորի մարզպետներին:



ՆԱԽԱԿ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հումանիտար բեռի ցանկ
Օգտագործված բժշկական պարագաներ և հագուստ

№ 13/2.1

h/h	Նկարագրություն	Միավոր	Քանակ
1	electric wheelchairs էլեկտրական անվասայլակներ	հատ	5
2	mechanical wheelchairs մեխանիկական անվասայլակներ	հատ	10
3	Chairs Աթոռներ	հատ	6
4	chairs with wheels աթոռներ անիվներով	հատ	5
5	Walkers քայլակ	հատ	14
6	metallic stands մետաղական վահանակներ	հատ	2
7	metallic empty container մետաղական դատարկ կոնտեյներ	հատ	1
8	metallic crutches մետաղական հենակներ	հատ	21
9	wooden hand crutches փայտե ձեռքի հենակներ	հատ	39
10	medical stretchers բժշկական պատգարակներ	հատ	9
11	bins with used clothing and accessories օգտագործված հագուստ և արքեսուարներ	տարա	4
12	bags with clothing օգտագործված հագուստ	պայուսակ	6
13	boxes with clothing օգտագործված հագուստ	տուփ	147
Total Ընդամենը			269



✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 994 - Ա
քաղ. երևան

«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/80-2/24086-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N ՎՀ/22.2/11305-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18 -ի N 06/3-8/31498-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված վերականգնողական թերապիայի համար սարքի (մեկ տեղ, 50 կգ ընդհանուր քաշով, 3,545 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման և «Արաբկիր» բժշկական համալիր» երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ին անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բերի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 995 - Ա


քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23934-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N ՎՀ/22.2/11176-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 15-ի N 06/3-8/31255-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Ռոու հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (1 տեղ, 9 կգ ընդհանուր քաշով, 522 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 111,100 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 996 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1198-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 07/80-2/23825-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/30845-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Սահմանել, որ «Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ավտոմեքենան (2016 թվականի արտադրության, Suzuki Vitara-1,6լ, նույնականացման համարանիշը՝ TSMLYE21S00244935, 11,939 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2,504,000 դրամ, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 3-ի «Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1198-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 997 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հայաստան» համահայկական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23921-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 18-ի N 03/3-8/31416-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2016 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՀՀ. 5/27-490 գրությունը, **ո Ր Ո Շ Մ Ա Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Էտոստամարաթոն - 2015» ծրագրի մասին» N Մ-857-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1205-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի հոկտեմբերի 30-ը:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2016 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված՝ PFS-21-10-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Մարաթոն 2016»-ի կազմակերպում՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 998 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 07/80-2/23842-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/31133-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Նիդերլանդներից Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդորակիչի (4 տեղ, 133 կգ ընդհանուր քաշով, 6,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 111,930 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Էօրնեկեան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 999 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/80-2/24079-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/31555-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Բարեգործական որակելի Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, ծիսական մոմի արտադրության համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված պարաֆինի (920 տեղ, 22,580 կգ ընդհանուր քաշով, 34,507.2 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1000 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-575-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23936-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 15-ի N 06/3-8/31254-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռք բերված գերմաքուր ազոտի գեներատորը (մեկ տեղ, 274 կգ ընդհանուր քաշով, 12,280 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Լաբորատորիաների վերազինման և զարգացման» ծրագրի մասին» N Մ-575-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1001 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 07/80-2/23827-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/30827-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ջեռուցման համակարգի պարագաները (424,9 կգ ընդհանուր քաշով, 223,940 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1002 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23933-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/31090-16 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2016 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2 հատ նոր ավտոմեքենայի ձեռք բերում՝ 36,460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԵԼ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1003 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/80-2/24081-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 15-ի N 06/3-8/31258-16 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» և «Պրեմիում» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 518,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1004 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 07/80-2/23845-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 06/3-8/31134-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա, հոկտեմբերի 25-ի N Մ-963-Ա, 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա և 2016 թվականի մարտի 18 N Մ-186-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2016 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N ՆՊ 003-ՀԱ 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լրացուցիչ նախագծային աշխատանքների իրականացում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1005 - Ա

(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ին)

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 22-ի N 01.1/80-2/24165-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 06/3-8/31322-16 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» N 2» N Մ-494-Ա որոշման 1-ին կետում «1,500,000 դրամի չափով» բառը փոխարինել «3,000,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ն. ԿԻՆՅԱՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ-1006- Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 07/80-2/23920-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N ՎՀ/22.2/11257-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 15-ի N 06/3-8/31253-16 եզրակացությունները, **որ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (լաբորատոր պարագաներ՝ 1 արկղ, 15 կգ քաշով, 258.11 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 175 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց US») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Արժեքը հրոշմարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:




Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

2013/2.21



Նո	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	Հոթատարաք ԴՆԹ Պոլիմերազ, 250 մեկուկ	1	147.91
2	Սառցե շղթայի արկղ, 81 դմ3	1	110.2
ԸՆԴՀԱՆՈՒՐ			258.11





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ-1007- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-620-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 1/08.2/12151-16 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 22-ի N 01.1/80-2/24163-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/31495-16 եզրակացությունները, **որոշում է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի» ծրագրի մասին» N Մ-620-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-855-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարկոմավտո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00059627) 2016 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/21 (ԽԱՊԱ-ՇՀԱՊՁԲ-16/1-Ա) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՈՒԱՁ 390945-460» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 11,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ-1008- Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N Մ-069-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկա-
կան բարեգործական հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 22-ի N 01.1/80-2/24164-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/31497-16 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 5-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-069-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-538-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սուր Արթուր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01563942) 2016 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված՝ N Գ-11/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության հինգ կլինիկաների սպասարահների համար նստարանների ձեռքբերում՝ 2,397,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ-1009- Ա
քաղ. երևան

«ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ/ ԶԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ
ՀԵՏԱՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 9-ի N 07/80-2/23316-16, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի
N 04/14/12491-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
2016 թվականի հոկտեմբերի 4-ի N ԼԱ/22.2/10735-16, Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016
թվականի հոկտեմբերի 3-ի N 06/3-8/29680-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 6-ի N 01/6030-16 եզրակացությունները,
որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397)
կողմից իրականացվող՝ 131,690 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «ՄԻԱՎ/
ԶԻԱՀ-ի կանխարգելումը հետսովետական երկրներում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մա-
տակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճեն-
ները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-
գրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող
ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մա-

տակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավար-
տից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապե-
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հան-
րապետության կառավարությանը հղված:



Ս.ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



«ՄԻԱՎ/ՁԻԱՆ-Ի ԿԱՆՆԱՐԳԵԼՈՒՄ ՀԵՏ ԳՅՈՒԿԱԿԱՆ ԿԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԵՐՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ


1	Ծրագրի նպատակը	Շիրակի մարզի 60 գյուղական համայնքների բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՆ-ի տարածման կանխարգելումը՝ իրազեկության բարձրացման և անվճար, անանուն հետազոտման հնարավորություն ընձեռնելու միջոցով:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործը	Ավստրիայի Զարգացման Գործակալություն Caritas Austria, Zelinkagasse 2, 1010 Vienna Albrechtsreithgasse 19-21, A-1160 Vienna
4	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ Հասցե՝ ք.Գյումրի, Հ.Սարգսյան փ, 3-րդ նրբանցք, տուն 8 ՀՎՀՀ՝ 05514397
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզի 60 գյուղ: Ամեն տարի ընդգրկվելու է 20 գյուղ: Գյուղերի ընտրությունը ծրագրային գործողություն է և այս պահին գտնվում է ընտրության փուլում: Բնագավառը՝ հանրային առողջապահություն
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքն է 131 690 եվրոյին համարժեք դրամ, որից 1-ին տարվա համար /01.07.2016-30.06.2017/ նախատեսված է 46.686 եվրոյին համարժեք դրամ, 2-րդ տարվա համար /01.07.2017-30.06.2018/ 42.502 եվրոյին համարժեք դրամ և 3րդ տարվա համար /01.07.2018-30.06.2019/ 42.502 եվրոյին համարժեք դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի 60 գյուղական համայնքի բնակիչ:


		Բարեգործություն ստացողի թիվն այս պահին գյուղերի ընտրության գործընթացի հետ կապված չի նշվում:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	36 ամիս Սկիզբը՝ 01.07.16 Ավարտը՝ 30.06.19
դրամի կողմից իրականացվող «Հրատարակչական աջակցություն» ծրագրի մասին»
N Մ-486-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009253) 2016 թվականի սեպտեմբերի 16-ին
կնքված՝ N 06/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական
ծառայությունների մատուցում՝ 870,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1029 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 21-ի N 01.1/80-2/24127-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 06/3-8/31324-16 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջապանորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յունիթուլզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02571784) 2016 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N 11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման կաթիլային համակարգի տեղադրում՝ 1,047,848.60 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՏ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1030 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 11-ի N 07/80-2/23452-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի N 06/3-8/30151-16 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված հազուստի և տպագիր նյութերի (3 տեղ, 1,137.5 կգ ընդհանուր քաշով, 57,468.80 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1,835 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

Սահմանել, որ հազուստը հանձնվելու է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ սիրիահայ կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխելու նպատակով, իսկ տպագիր նյութերը՝ գիտակրթական և մշակութային հաստատություններին:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության՝ բեռի համապատասխան ձևակերպումներն և բաշխումն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽՆԱԳՐԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1031 -Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈԼՏԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾ-
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/23724-16, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 1/06/1243-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/30826 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Շոտլանդիայի գոլֆի ասոցիացիայի «R&A» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ազգային գոլֆի ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված գոլֆի մանկական մարզագույքի (3 տեղ, 33 կգ ընդհանուր քաշով, 774.94 ՄԵԾ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ազգային գոլֆի ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՆԱԽԱՐԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1032 -Ա
քաղ. երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՏԱՇԻՐ» ՔԱՂԱՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/23315-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 6-ի N 06/3-8/30229-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N 04/14/12787-16 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 7-ի N 101/108.3.5/4685-16 եզրակացությունները, **ո Ր ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 24,965,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տաշիր քաղաքի հրապարակի մասնակի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նիկոլ - Դուման» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2016 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսավորության սյունների և լուսամուկիների մատակարարում՝ 2,460,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Արգիշտի-1» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06910635) 2016 թվականի սեպտեմբերի 16-ին կնքված՝ թիվ 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 18,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Մարմարի աշխարհ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808678) 2016 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված՝ թիվ 06/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տնկիների, սածիլների և սերմերի մատակարարում՝ 3,605,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Տաշիրի քաղաքապետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
 հոգաբարձուների խորհրդի կողմից
 (արձանագրություն թիվ 10/16)
 01 սեպտեմբերի 2016թ.

հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
 Աշոտ Վարոյան



«Տաշիր քաղաքի հրապարակի մասնակի բարեկարգում» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Տաշիր քաղաքի կենտրոնական հրապարակի բարեկարգմանը: «Տաշիր» Բարեգործական Հիմնադրամը նախատեսում է սույն ծրագրի շրջանակներում Տաշիր քաղաքին նվիրել տնկիներ, լուսապուրակներ և կատարել սաֆալտապատման աշխատանքներ:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, քաղաքաշինության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	24,965,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ, Լոռու մարզ, քաղ. Տաշիրի քաղաքային համայնք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2016 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 30-ը:

13/5

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ol style="list-style-type: none"> 1. ծառերի և ծաղիկների տնկիների ձեռք բերում - 3,605,000 դրամ, 2. լուսապուրակների ձեռք բերում - 2,460,000 դրամ, 3. սաֆալտապատման աշխատանքների իրականացում - 18,900,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.11.2016թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ: <ol style="list-style-type: none"> 1. «Մարմարի աշխարհ» ՍՊԸ-ից ծառերի և ծաղիկների տնկիների ձեռք բերում - 3,605,000 դրամ, 2. «Նիկոլ Դուման» ԱԿ - ից լուսապուրակների ձեռք բերում - 2,460,000 դրամ, 3. «Արգիշտի - 1» ՍՊԸ-ի հետ կնքված աշխատանքների կատարման մասին պայմանագրով նախատեսվում է - 3,150 քառ. մետր սաֆալտապատման աշխատանքների իրականացում - 18,900,000 դրամ,
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Տաշիր քաղաքի քաղաքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հաստատման և իրականացման մասին որոշումների ընթացքի և ավարտի վերաբերյալ:



13/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1033 -Ա
քաղ. երևան

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/80-2/23911-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/31418-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված կահույքի (25 տեղ, 784 կգ ընդհանուր քաշով, 25,284.60 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 433,500 դրամ, «ՄՃՓ» ՏՄ և 22 տեղ, 620 կգ ընդհանուր քաշով, 19,509.10 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 365,600 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1034 -Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/23226-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի N 06/3-8/30111-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարմարե փայլեցված սալերը (9 տեղ, 26,994 կգ ընդհանուր քաշով, 20,799.14 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,164,160 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1035 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 07/80-2/22955-16 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի
N 06/3-8/29727-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմ-
նադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսություն-
ների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում»
ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-
073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի
24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա
որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշա-
նակություն՝

«Դռագաման» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00446864) 2016 թվականի սեպտեմբերի 26-ին
կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնի մատակա-
րարման ծառայությունների մատուցում՝ 12,425,000 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1036 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/80-2/24084-16 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 15-ի
N 06/3-8/31257-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Տաշիր» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի
կառուցում» ծրագրի մասին» N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06602008) 2016 թվականի հոկտեմ-
բերի 10-ին կնքված՝ N 10102016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
շինարարական աշխատանքների իրականացում՝ 309,000 դրամի չափով, առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2016 թվականի N Մ-1037 - Ա
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ի նիստին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ-12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/80-2/24083-16 և հոկտեմբերի 24-ի N 01.1/80-2/24241-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/31417-16 և հոկտեմբերի 24-ի N 06/3-8/32159-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2016 թվականի հոկտեմբերի 21-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀԱ) կողմից 2015-2016 թթ. իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշման (2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1326-Ա որոշման խմբագրությամբ) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) որոշման 1-ին կետում «1,750,550 ԱՄՆ-ի դոլարին» բառերը փոխարինել «1,778,550 ԱՄՆ-ի դոլարին» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02535097) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան Հյուրանոց» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533075) 2016 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N ՅԻ-19Գ.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրացանային ծառայությունների մատուցում՝ 6,828,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«21 հոկտեմբերի» 2016թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀԱ) կողմից 2015 – 16թթ. իրականացվող

Ծ Ր Ա Գ Ի Ր

1 Ծրագրի նպատակը
 Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀԱ) ծրագրի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության կայացմանը, մարդու իրավունքների և ազատությունների իրականացմանն ուղղված բարեփոխումների արդյունավետ կյանքի կոչելուն, խրախուսել հանդուրժողականության տարածմանը հասարակության տարբեր խոցելի խմբերի նկատմամբ, աջակցել քաղաքացիական հասարակության կառույցների զարգացմանը, տարածել բաց հասարակության արժեքները և սատարել բաց, թափանցիկ և արդյունավետ կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու կիրառմանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում, նպաստել որակյալ կրթության և առողջապահության մատչելիությանը հանրության լայն շերտերի համար, ներառյալ խոցելի խմբերը: Ծրագիրը նպատակ ունի նաև աջակցել քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների, ներառյալ հասարակական կազմակերպություններին, անհատներին, ակադեմիական միջավայրի ներկայացուցիչներին, լսելի դարձնել իրենց ձայնը պետությանը և հասարակությանը հուզող տարբեր խնդիրների շուրջ, ինչպես նաև ապահովել նրանց մասնակցության բարձր և արդյունավետ մակարդակ պետական կառավարման գործընթացներում:

ԲՀԻՕՀՀԱ-ն ունի հետևյալ ուղղությունները. 1. Քաղաքացիական հասարակություն, 2. Հանրային առողջապահություն, 3. Կրթություն, 4. Իրավունք և քրեական արդարադատություն:

ԲՀԻՕՀՀԱ-ի նպատակները հետևյալներն են ըստ ուղղությունների.

Քաղաքացիական հասարակություն

- Հիմնադրամն այս ծրագրի միջոցով, ներառյալ դրամաշնորհ տրամադրելով՝ ու սեփական կարողություններն օգտագործելով՝ աջակցելու է Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը և հանրային կյանքի տարբեր ոլորտներում հասարակական կազմակերպությունների կարողությունները՝ արդյունավետ ունենալով անկախ կառույցներին: Դրանք կարևոր համակարգ՝ երկրում ժողովրդավարական գործընթացների առավել արդյունավետ իրականացման համար: Նաև աջակցելու է Հայաստանի հասարակության տարբեր խոցելի խավերին՝



հանրային շրջանակներում տարեցների, ազգային, կրոնական, սեռական փոքրամասնությունների, սոցիալապես անապահով ընտանիք, փակ և կիսափակ հաստատություններում գտնվողներին, իրենց հիմնարար իրավունքների և իրականացմանն ու պաշտպանությանը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության և մեր երկրի կողմից ստորագրված միջազգային պարտավորությունների դրույթների: Այս ծրագիրը հնարավորություն է ստեղծելու նպաստել Հայաստանի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ եկած խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ու դրանց շուրջ քննարկումների անցկացմանը՝ պետական, հասարակական, միջազգային կառույցների մասնակցությամբ: Հիմնադրամն այս ծրագրի շրջանակներում նպաստելու է մարզային բնակչության ակտիվությանն սեփական համայնքի կառավարման գործընթացներում առավել մասնակցային դառնալուն, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնելու երիտասարդներին կյանքի կոչել գաղափարներ, որոնք ուղղված կլինեն իրենց համայնքի զարգացմանը, նաև հասարակության ուշադրությունը գրավելուն երկրի համար կարևորություն ունեցող խնդիրներին: «Քաղաքացիական հասարակություն» ուղղության գաղափարները իրականացնելուն նպաստելու համար ԲՀԻՕՀՀԱ-ն կտրամադրի դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատներին, ինչպես նաև, Հիմնադրամն ինքը կիրականացնի մի շարք միջոցառումներ՝ հետազոտություններ, զեկույցների պատրաստումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր՝ ընդգրկելով տեղական և միջազգային փորձագետներ տարբեր մախաձեռնություններում:

Հանրային առողջապահություն

- Այս ծրագրի շրջանակներում Հիմնադրամը շարունակելու է ջատագովել Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկության քաղաքականության ներդրմանը, որի հայեցակարգն արդեն իսկ հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Սա Հիմնադրամն իրականացնելու է՝ աջակցելով համապատասխան օրենսդրական դաշտի և իրատեսական գործողությունների ծրագրի մշակմանն ու ապահովելով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և բարձրակարգ փորձագիտական օժանդակություն: Նախատեսվում է առանձին ուշադրություն դարձնել մանկական պալիատիվ խմբի զարգացման հեռանկարներին, իրականացնելով կարիքների և երկրում առկա հնարավորությունների գնահատում, որը հիմք կհանդիսանա իրատեսական ռազմավարության մշակման համար: Այս ամենը Հիմնադրամը կիրականացնի թե իր և թե գործընկերների փորձագիտական հնարավորություններն օգտագործելով: Հիմնադրամի այս ծրագիրը շարունակելու է օժանդակել Հայաստանի Հոգեկան առողջության քաղաքականության իրականացմանը՝ համաձայն ՀՀ Կառավարության կողմից ընդունված ռազմավարության, որն հիմնված է համայնքային խմամքի կենտրոնների սկզբունքի վրա և՛ որոնց, թվով 2 մոդելների աջակցումը հնարավորություն կստեղծի դրանց հետագա ընդլայնման համար: Ծրագիրը նպաստելու է խոցելի և մարզինալացված խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը: Այս ծրագիրը նաև ստեղծելու է համապատասխան կրթական և մասնագիտական միջավայր՝ պալիատիվ խմամքի, հոգեկան առողջության, հանրային առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները զուգահեռ քննարկելու լայն հանրության համար: Հիմնադրամն իր այս ծրագրի միջոցով նպաստելու է առողջապահության ոլորտի արդյունավետ իրավական կարգավորման գործընթացներին: Ծրագիրը կիրականացվի ինչպես դրամաշնորհների տեսքով, այնպես էլ ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ քննարկումների, հետազոտական աշխատանքների, նաև պետական, հասարակական կազմակերպությունների և միջազգային ու տեղական համապատասխան փորձագետների ընդգրկմամբ:

	<p>Կրթություն</p> <ul style="list-style-type: none"> - Հիմնադրամի կրթությունն ծրագիրը շարունակելու է լինել ջատագովը հայաստանյան բուհական համակարգի համապատասխանելիությանն եվրոպական չափանիշներին՝ օժանդակելով Բոլոնիայի շրջանակներում իրատեսական, մասնակցային և արդյունավետ բարեփոխումների իրականացմանը: Ծրագիրը, օգտագործելով թե՛ Հիմնադրամի, թե՛ հետաքրքրված ակադեմիական համայնքի, և թե՛ միջազգային վարկանիշ ունեցող փորձագետների գիտելիքներն ու կարողությունները, նպաստելու է անկախ փորձագիտական գնահատումների և հետազոտությունների իրականացմանը, որոնք էլ խթան են հանդիսանալու առավել արդյունավետ և շոշափելի իրականացվող բարեփոխումներին: - Ծրագիրը ստեղծելու է հնարավորություններ անկախ գնահատումների և մշտադիտարկումների համար, որոնք պետք է նպաստեն միջնակարգ կրթության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումներին, դրանք դարձնելով առավել թափանցիկ, դյուրին և արդյունավետ, ինչպես նաև բարձրացնելու են որակյալ դպրոցական կրթության մատչելիությունը՝ աջակցելով միջազգայնորեն ընդունված չափորոշիչների ներդրմանը մեր կրթական համակարգում՝ համաձայն ստանձնած պարտավորությունների և մեծածավալ նախագծերի: Ծրագիրը կիրականացվի դրամաշնորհների տեսքով, որոնք կշնորհվեն և կազմակերպություններին, և տեղական ու միջազգային փորձագետներին, ինչպես նաև, որոշ նախաձեռնություններ կիրականացվեն ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պատրաստված առաջարկությունների ջատագովություն, շահագրգիռ լայն խմբերի համար քննարկումների կազմակերպում: <p>Իրավունք և քրեական արդարադատություն</p> <ul style="list-style-type: none"> - Ծրագիրն, օգտագործելով Հիմնադրամի և գործընկերների ներուժը, նպաստելու է մեր երկրում օրենքի գերակայության հաստատմանը, Հայաստանի կողմից արդարադատության ոլորտում ստանձնած բարեփոխումների թափանցիկ և իրատեսական իրականացմանը և դրանց մասին տեղեկատվությունը դարձնելու է մատչելի լայն հասարակության համար, աջակցելու է փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությանը, այնտեղի պայմանների բարելավմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև օժանդակելու է արդարադատության մատչելիության բարձրացմանը՝ աջակցելով փաստաբանական գործունեությանը, այն հասցնելով առավել բարձր որակի: Ծրագիրը, հենվելով տեղական և միջազգային փորձագիտական կարողությունների վրա, նպաստելու է Հայաստանում ընթացող քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներին՝ դրանք իրականացնելով միջազգային չափանիշներին համապատասխան, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքի դեմ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանը: «Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության նպատակին հասնելու համար կտրվեն դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատ մասնագետներին, ինչպես նաև կկատարվեն աշխատանքներ ուղղակիորեն ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից, այն է՝ կազմակերպություններ, վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված կլինեն զարգացնելու տեղական մասնագետների հմտություններն ու կարողությունները: 										
2.	<p>Ծրագրի օգտագործման հիմնական նպատակը</p> <p>Ակնկալվում է կրթության ոլորտում և ծրագրի ստացում՝ ապրանքների, սարքավորումների, գրքերի և գրականության, ուսումնական և մեթոդական ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում,</p>										
	<p>հեռահաղորդակցային տեխնոլոգիաների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, մեթոդական և մեթոդական ձեռքբերման հետ կապված տարածքի վարձակալության, հյուրանոցների և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում, տարեկան ֆինանսական անդիտի ծախսերի ԱԱՀ-ից ազատում:</p>										
3.	<p>Բարեգործը</p> <p>Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ջյուզի (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ)՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով:</p>										
4.	<p>Ծրագիրը կատարողը</p> <p>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ Գործող հասցե՝ Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758 Իրավաբանական հասցե՝ Արամի 44 ՀվՀՀ՝ 02535097</p>										
5.	<p>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</p> <p>Ծրագիրն իր բոլոր ուղղություններով իրագործվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ներառյալ Երևանն ու հեռավոր մարզերը: Ծրագրերն իրականացվում են կրթության, առողջապահության և իրավա-հասարակական բնագավառներում:</p>										
6.	<p>Ծրագրի բյուջեն</p> <p>ԲՀԻՕՀՀՄ-ի 2015 – 16թթ. ընդհանուր ծրագրի գումարը կազմում է 1,778,550 ԱՄՆ դոլար, որից ըստ ուղղությունների.</p> <table border="1" data-bbox="156 1657 1332 1948"> <tr> <td>1. Քաղաքացիական հասարակություն</td> <td>818,000 ԱՄՆ դոլար (350,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 468,000 ԱՄՆ դոլար 2016թ.)</td> </tr> <tr> <td>2. Հանրային առողջապահություն</td> <td>210,000 ԱՄՆ դոլար (120,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2014թ.)</td> </tr> <tr> <td>3. Կրթություն</td> <td>360,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 160,000 ԱՄՆ դոլար 2016թ.)</td> </tr> <tr> <td>4. Իրավունք և քրեական արդարադատություն</td> <td>200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2016թ.)</td> </tr> <tr> <td>5. Կազմակերպչական ծախսեր</td> <td>190,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 102,000 ԱՄՆ դոլար 2016թ.)</td> </tr> </table> <p>Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ջյուզի (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ) կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով՝ ծրագրի իրականացման ընթացքում (եռամսյակային կտրվածքով՝ միջինը մոտ 218,818 ԱՄՆ դոլար):</p>	1. Քաղաքացիական հասարակություն	818,000 ԱՄՆ դոլար (350,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 468,000 ԱՄՆ դոլար 2016թ.)	2. Հանրային առողջապահություն	210,000 ԱՄՆ դոլար (120,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2014թ.)	3. Կրթություն	360,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 160,000 ԱՄՆ դոլար 2016թ.)	4. Իրավունք և քրեական արդարադատություն	200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2016թ.)	5. Կազմակերպչական ծախսեր	190,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 102,000 ԱՄՆ դոլար 2016թ.)
1. Քաղաքացիական հասարակություն	818,000 ԱՄՆ դոլար (350,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 468,000 ԱՄՆ դոլար 2016թ.)										
2. Հանրային առողջապահություն	210,000 ԱՄՆ դոլար (120,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2014թ.)										
3. Կրթություն	360,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 160,000 ԱՄՆ դոլար 2016թ.)										
4. Իրավունք և քրեական արդարադատություն	200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2016թ.)										
5. Կազմակերպչական ծախսեր	190,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 102,000 ԱՄՆ դոլար 2016թ.)										
7.	<p>Բարեգործություն ստացողը</p> <p>«Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհ ստացողները կլինեն ցանկում ընդգրկված կազմակերպություններից, որոնք կընտրվեն մրցույթների արդյունքում՝ համաձայն ԲՀԻՕՀՀՄ-ի 2014-17թթ.</p>										

Ուսումնական ուղղությունների և իրենց կողմից ներկայացված ծրագրերի: Ներկայացված ծրագրերը հաստատվելու են ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի և ցանցային ծրագրերի հարիւրողների կողմից:

«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 01512224

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00826651

«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պուշկինի 96, ք. Գյումրի 3102, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05522266

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ
ՀՎՀՀ՝ 06926024

«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մաշտոցի պող. 15, բն. 131, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 00056317

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Այգեստան 9-րդ փող., տ. 6, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 00063072

«Մանդատ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Թումանյան 24, բն. 33ա, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 02709141

«Հայաստանի հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պուշկինի 3ա, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 01215357

«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Հալաբյան 22բ., բն. 42, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 01229454

«Հանրային լրագրության ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սարյան 30, 2-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02597658

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Շահումյան 68ա, ք. Արմավիր 0901, Արմավիրի մարզ
ՀՎՀՀ՝ 04417204

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պոռչյան 8, ք. Մարտունի 1402, Գեղարքունիքի մարզ



ՀՎՀՀ՝ 08410372

«Գորիսի մանուկ ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Անկախության 2, ք. Գորիս, Սյունիքի մարզ
ՀՎՀՀ՝ 09207456

«Խորանվրդ» ինտելեկտուալ կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մ. Մկրտչյան 37ա/1, ք. Գյումրի, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05528262

«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02554073

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Մ. Ավետիսյան 4-րդ փող., ք. Երևան 0069
ՀՎՀՀ՝ 00855742

2015-16թթ. ընթացքում իրականացվող ծրագրի ստացողներ են հանդիսանալու նաև մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող այլ հասարակական կազմակերպություններ և անհատներ: Նրանց ընտրությունը կկատարվի հետագայում՝ հայտարարվող բաց մրցույթների արդյունքում ներկայացրած հայտերի հիման վրա:

Մրցույթների չափանիշները միանման են ԲՀԻՕՀՀՄ-ի բոլոր ուղղությունների համար և ներկայացված են ստորև:

«Հանրային առողջապահություն» ուղղությունն իր մեջ ունի մի քանի ենթաուղղություններ: Ստորև ներկայացվում են դրամաշնորհի ստացողներն ըստ ենթաուղղությունների.

ա) «Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցում» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից է «Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Արշակունյաց պող. 2, 4-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00885303

Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև ԲՈՒՀերը, մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններն ու անհատները: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:

բ) «Ցավամոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի մշակված քաղաքականության իրականացմանն, որի հայեցակարգը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Ծրագրի աջակցումը ներառում է՝ համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծում, ինչպես նաև այդ ոլորտի խնդիրների շուրջ բարձրակարգ տեղական և միջազգային մասնագետների մասնակցությամբ պարբերական քննարկումների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև աջակցել պալիատիվ

խմանքի ծառայությունների իրականացմանը՝ հետագայում պետական ֆինանսավորում ստանալու ակնկալիքով: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության, Գլոբալ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և այլ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը կիրականացվի նաև ինչպես ուղղակիորեն Հիմնադրամի, այնպես էլ պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:

«Ցավամոքիչ (Պալիատիվ) խմանք» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից են՝

«Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից:

Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 85, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02571251

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01503448

Երևանի պետական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928

Ծրագրի ստացողներ են նաև մարդու իրավունքներով և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր:

զ) «Հոգեկան առողջություն» ծրագիր
2015-16թթ. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության իրականացմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև համապատասխան մասնագետների պատրաստմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ խորհրդակցությամբ և համագործակցությամբ:

Այս աշխատանքները կիրականացվեն տեղական և միջազգային համապատասխան փորձագետների ընդգրկմամբ և կհամակարգվեն Հիմնադրամի կողմից: Տեղական մասնագետները կներկայացնեն ՀՀ Սոցապ, Առողջապահության և Կրթության և գիտության նախարարությունները, ԵՊՀ, ԵՊԲՀ և այլ մասնագիտական կառույցներ:

«Հոգեկան առողջություն» ծրագրի դրամաշնորհի ստացողներից են՝

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01503448

Երևանի պետական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928

«Հոգեկան առողջություն» ծրագրի ստացողներ են նաև մարդու իրավունքներով և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր:



գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր:

«Կրթություն» ծրագիր
2015-16թթ. Ծրագիրը նախատեսում է իրականացնել կրթության ոլորտին առկա խնդիրների և ընթացող բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց արդյունքների քննարկումներ, ուսուցիչներին անձնակազմի և կառույցների մասնակցությամբ: Հետազոտությունների և ուսումնասիրությունների շահառուներից են հանդիսանալու կրթության ոլորտով հետաքրքրված անհատները, ակադեմիական համայնքի ներկայացուցիչները, բուհերը, դպրոցները, միջազգային կազմակերպությունները:

2015-16թթ Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող կազմակերպությունների, բուհերի, դպրոցների և անհատ հետազոտողների ընտրությունը կատարվելու է Հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթների շրջանակներում ներկայացված ծրագրերի հիման վրա և հաստատվելու է տեղական Տնօրենների խորհրդի և Կրթության աջակցման ցանցային ծրագրի խորհրդի կողմից:

«Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողներն են՝

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:

Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00826651

«Մեր իրավունքների սահմանները» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ Ոստիկանության համակարգի Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:

Գտնվելու վայրը՝ Նոր Արեշ 79 – 11, ք. Երևան 0041
ՀՎՀՀ՝ 60454587

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է կազմակերպությունների կողմից ներկայացրած ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Մարդու իրավունքների և դրամաշնորհների ղեկավարման ծրագրի, նստավայրը Բուդապեշտ, խորհրդի կողմից:

2015-16թթ. Ծրագրի ստացողներն են հանդիսանում նաև իրավունքի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ, անհատներ, իրավաբան-գիտնականներ, փաստաբաններ, որոնց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների և իրենց կողմից ներկայացված հայտերի գնահատման հիման վրա:

2015-16թթ. ԲՀԻՕՀՀԱ-ի դրամաշնորհի ստացող կազմակերպությունների ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում, հետևյալ հիմնական չափանիշներով՝

ա) ծրագրի համապատասխանելիությունը Հիմնադրամի 2014-17թթ. Ուղղակարությանը
բ) ներկայացված ծրագրի համապատասխանելիությունը Հիմնադրամի կողմից հայտարարած մրցույթի պահանջներին ու նպատակներին
գ) ծրագրի արդիականությունն ու իրատեսական լինելը

	<p>դ) ներկայացված ծրագրի նպատակների, խնդիրների և դրանց իրականացման մեխանիզմների համապատասխանությունը և արդյունավետությունը</p> <p>ե) պահանջվող միջոցների համապատասխանությունը ներկայացված նպատակներին</p> <p>զ) ծրագիրը ներկայացրած կազմակերպության և ընդգրկված աշխատակազմի կամ անհատի պատրաստվածությունը</p> <p>է) ծրագիրը իրականացնելու ժամանակ համագործակցության առկայությունը պետական և հասարակական այլ կառույցների ու կազմակերպությունների հետ:</p>
8.	<p>Ծրագրի իրականացման տևողությունը</p> <p>ԲՀԻՕՀՀԱ-ի ծրագիրը կիրականացվի 2 տարվա ժամկետում՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
9.	<p>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p> <p>2015-16թ. «Քաղաքացիական հասարակություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնությանը.</p> <p>ա) 2015թ. և 2016թ. հունվար ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված օժանդակելու մարզերում մարդու իրավունքների ոլորտում գործող ՀԿ-ներին: Մրցույթի նպատակն է աջակցել մարզային հասարակական կազմակերպություններին՝ հզորացնելով և զարգացնելով իրենց իրավապաշտպան կարողությունները մարդու իրավունքների և խոցելի խմբերի շահերի պաշտպանության և քառազուգույն ոլորտում: Երկու տարվա ընթացքում կտրամադրվի մինչև 8 դրամաշնորհ, իսկ մրցույթի բյուջեն կկազմի 240,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 140,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>բ) 2015-16թթ. շնորհակցվելու են իրականացվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ուղղված նախաձեռնություններ: Երկու տարվա ընթացքում հայտարարվելու են նվազագույնը թվով 5 մրցույթներ, որոնց շրջանակներում հնարավորություն է ստեղծվելու ներկայացնել Հայաստանի համար իրատեսաբար հարթների շուրջ հետազոտական աշխատանքներ իրականացնելու, մշակված փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև դրանց շուրջ բանավեճեր և քննարկումներ կազմակերպելու ուղղված հայտեր: Մրցույթի արդյունքում դրամաշնորհների են արժանանալու անհատներ, փորձագետների խմբեր, հասարակական կազմակերպություններ, ԲՈՒՀեր, այլ կազմակերպություններ: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 30 դրամաշնորհ, իսկ մրցույթի բյուջեն կկազմի 160,000 ԱՄՆ դոլար (70,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>գ) 2015-16թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը շարունակելու է իրականացնել իր հիմնական առաքելությունը, որն է՝ օժանդակել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առավել արդյունավետ իրականացմանը այնպիսի խավերի մոտ, ինչպիսիք են կանայք, երեխաները, փոքրամասնությունները, ծերերը և հասարակության այլ խոցելի շերտեր, որոնք կունենան այդ պաշտպանության ամիրաժեշտությունը: Այս նախաձեռնությունը կիրականացվի թե ուղղակիորեն պաշտպանության մեխանիզմներ ստեղծելով և դրանք կիրառելով, թե կազմակերպությունների կարողությունների զարգացման և հզորացման ճանապարհով: Նախաձեռնությունը կյանքի կկոչվի ինչպես մրցույթների արդյունքում ընտրված, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի միջոցով: Երկու տարվա ընթացքում, առմամբ, կտրամադրվի մինչև 20 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 300,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 175,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>դ) 2015-16թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը կշարունակի իր գործունեությունն ուղղված հասարակության խոցելի խմբերի շահերի պաշտպանությանը՝ նույն ժամանակ հանրապետության տարբեր հարցերի շուրջ հանրային լայն</p>



	<p>քննարկումներ անցկացնելու ձևաչափով, որին մենակից և լիարժեք, և հասարակական, և միջազգային կազմակերպությունների բոլոր հետաքրքրված կողմերի քննարկումները կարևորվում են տարբեր խնդիրների լուծման գործընթացներում ընդգրկված պետական, հասարակական և միջազգային կառույցների միջև կառուցողական բանավեճի ծավալմանն ու մտքերի փոխանակմանը: Երկու տարվա ընթացքում, այս նախաձեռնությունների շրջանակներում նախատեսվում է կազմակերպել մինչև 30 մրցույթներ, հանդիպումներ, կլոր-սեղաններ, բանավեճեր, տեղական և միջազգային փորձագետների մասնակցությամբ: Նախաձեռնության բյուջեն կազմում է 48,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 33,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>ե) 2015-16թթ փետրվար, սեպտեմբեր ամիսներին հայտարարվելու են մրցույթներ՝ նպատակ ունենալով աջակցել տարբեր երիտասարդական նախաձեռնություններին, որոնք ուղղված են լինելու լուծելու համայնքային մշակակություն և կարևորություն ունեցող խնդիրներ: Այս նախաձեռնությունները խրախուսելու են համայնքի անդամների ակտիվ ներգրավվածությունը իրենց համայնքի խնդիրներ լուծման գործընթացներում: Այս նախաձեռնության շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել միջոցառումներ, որոնք կնպաստեն երիտասարդների մոտ ժամանակակից տարբեր հնարավորություններից օգտվելու հմտությունների զարգացմանը: Նախաձեռնության բյուջեն կազմում է 70,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>«Քաղաքացիական հասարակություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 800,000 ԱՄՆ դոլար (350,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 450,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>2015-2016թ.թ. «Հանրային առողջապահություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված կլինեն Հայաստանում հանրային առողջապահության խնդիրների լուծմանը՝ մասնագետների կարողությունների զարգացման, քաղաքականությունների մշակման, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների իրականացման միջոցով: Ծրագրի շրջանակներում կարևորվելու է առողջության մասնակցությունը ոլորտների համադրությունը, խոցելի խավերի առողջապահական խնդիրների շուրջ շահերի պաշտպանությունը և այս ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը: Այս ուղղությունների շրջանակներում իրականացվելու են հետևյալ ենթաուղղությունները իրենց համապատասխան բյուջեներով.</p> <p>ա) «Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցման» ծրագրերի նպատակն է աջակցել խոցելի խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը և իրականացնել այդ խմբերի շահերի պաշտպանությանն ուղղված ծրագրեր: Ծրագրի շրջանակներում կատարվելու է մարդու առողջությանը վերաբերող օրենքների և օրենսդրական ակտերի վերլուծություն և առաջարկությունների մշակում, կատարվելու են իրավունքի և առողջապահության խնդիրներն արժարժող ուսուցողական ծեռնարկների մշակմանն ու տարածմանն աշխատանքներ, իրականացվելու են իրավունքի և առողջապահության ոլորտի մասնագետների կատարելագործման ծրագրեր: Ծրագրերի շրջանակներում դրամաշնորհ կստանա «Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 4 դրամաշնորհ:</p> <p>«Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցման» ծրագրերի բյուջեն կազմում է 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 40,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>բ) «Ցավամոքիչ (պալիատիվ) խնամք» ծրագրի նպատակն է աջակցել այդ ոլորտի քաղաքականության իրականացմանը՝ բարելավելով օրենսդրական դաշտը և իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև տեղեկացնել լայն հասարակությանը:</p>
--	--

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի մշակված քաղաքականության իրականացման, որի հայեցակարգը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Ծրագրի աջակցումը ներառում է՝ համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծում, ինչպես նաև այդ ոլորտի խնդիրների շուրջ բարձրակարգ տեղական և միջազգային մասնագետների մասնակցությամբ պարբերական քննարկումների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև աջակցել պալիատիվ խնամքի ծառայությունների իրականացմանը՝ հետազայում պետական ֆինանսավորում ստանալու ակնկալիքով: Ծրագիրը իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության, Գլխավոր հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և այլ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը կիրականացվի նաև ինչպես ուղղակիորեն Հիմնադրամի, այնպես էլ պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:

Աջակցություն է ցուցաբերվելու քննարկումների կազմակերպմանը՝ տեղական և միջազգային մասնագետների ներգրավածությամբ: Ենթածրագիրը կարևորում է նաև՝ անհրաժեշտ մասնագետների պատրաստման նպատակով ուսումնական կենտրոնի ստեղծումը և ծառայությունների մոդելների իրականացումը: Դրամաշնորհներ կտրվեն «Հակազգային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը, Երևանի պետական համալսարանին, Երևանի Մ. Զեքարցու անվան պետական բժշկական համալսարանին: Աշխատանքներ կիրականացվեն նաև ուղղակիորեն Հիմնադրամի, պալիատիվ խնամքի բնագավառում գործունեություն իրականացնող պետական և հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 4 դրամաշնորհ:

«Ցավամոքիչ խնամք» ծրագրի բյուջեն կազմում է 100,000 ԱՄՆ դոլար (60,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 40,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

զ) «Հոգեկան առողջություն» ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում հոգեկան առողջության քաղաքականության հայեցակարգի, դրանից բխող համապատասխան օրենսդրական փոփոխությունների մշակման, ինչպես նաև գործողությունների ծրագրի նախանշման ու դրանց հետ կապված լայն հանրային քննարկումների կազմակերպմանը:

2015-16թթ. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության իրականացմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև համապատասխան մասնագետների պատրաստմանը: Ծրագիրը իրականացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ խորհրդակցությամբ և համագործակցությամբ: Այս աշխատանքները կիրականացվեն տեղական և միջազգային համապատասխան փորձագետների ընդգրկմամբ և կհամակարգվեն Հիմնադրամի կողմից: Տեղական մասնագետները կներկայացնեն ՀՀ Սոցալ, Առողջապահության և Կրթության և գիտության նախարարությունները, ԵՊՀ, ԵՊԲՀ և այլ մասնագիտական կառույցներ:

Այս աշխատանքները կիրականացվեն ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ համապատասխան տեղական և միջազգային փորձագետների ընդգրկմամբ: ՀՀ Աշխատանքի և սոցիալական ապահովածության և Առողջապահության նախարարությունների հետ համաձայնեցված, ինչպես նաև կտրամադրվեն դրամաշնորհներ Երևանի Մ. Զեքարցու անվան պետական բժշկական համալսարանին, Երևանի պետական համալսարանին:

«Հոգեկան առողջություն» ծրագրի երկու տարվա բյուջեն կազմում է 100,000 ԱՄՆ դոլար (20,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 10,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

«Հանրային առողջապահություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 210,000 ԱՄՆ դոլար



(120,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

2015-2016թթ. «Կրթություն» ծրագրի ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնություններին:

2015-16թթ. ծրագիրը նախատեսում է իրականացնել կրթության ոլորտում աշխատող խնդիրների և ընթացող բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց արդյունքների քննարկումներ հետաքրքրված անձանց և կառույցների մասնակցությամբ: Հետազոտությունների և ուսումնասիրությունների շահառուներից են հանդիսանալու կրթության ոլորտով հետաքրքրված անհատները, ակադեմիական համայնքի ներկայացուցիչները, բուհերը, դպրոցները, միջազգային կազմակերպությունները:

ա) 2015թ. հունվար և 2016թ. ապրիլ ամիսներին հայտարարվելու է մրցույթ, որի նպատակն է օժանդակել կրթության ոլորտով հետաքրքրված մասնագետներին և կազմակերպություններին իրականացնել հետազոտություններ այսօրվա կրթական տարբեր խնդիրների լուծման արդյունավետ ուղղություններ գտնելու և դրանք բոլոր շահագրգիռ կողմերի հետ քննարկելու նպատակով: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 20 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 80,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

բ) 2015թ. սեպտեմբեր և 2016թ. մարտ ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված կրթության ոլորտի խնդիրների ուսումնասիրմանը Հայաստանի մարզերում, ինչպես նաև դրանք մարզային և հանրապետական մակարդակներում քննարկելու և արդյունավետ լուծման ճանապարհներ գտնելու նպատակով: Շահառուները հանդիսանալու են մարզային կազմակերպություններ, անհատներ, կրթության ոլորտի մասնագետներ: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 20 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 80,000 ԱՄՆ դոլար (45,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 35,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

գ) 2015-16թթ. կկազմակերպվեն թվով 5-8 աշխատանքային քննարկումներ, կլր-սեղաններ՝ կրթության հարցերին նվիրված, որին կմասնակցեն տեղական և միջազգային փորձագետներ: Այս նախաձեռնության բյուջեն կազմելու է 20,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 5,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

դ) 2015թ. և 2016թ. հետևողականորեն կշարունակվեն իրականացվել կրթության որակի բարձրացման ուղղված ծրագրեր, որոնք իրենց մեջ կպարունակեն հետևյալ բաղադրիչները. կիրականացվեն մի շարք ուսուցողական միջոցառումներ, որոնք կնպաստեն ուսանողների մոտ գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների զարգացմանը: Ծրագիրը աջակցելու է ուսանողակներին ուսումնական ծրագրեր կազմելու և մատուցելու, դասավանդման մոդարարական մեթոդներին և հմտություններին: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրվի մինչև 25 դրամաշնորհ, իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 100,000 ԱՄՆ դոլար (50,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 50,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

ե) 2015թ. և 2016թ. բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում կիրականացվի բազմակողմանի մոնիտորինգային ծրագիր, որի նպատակն է բացահայտել Բոլոնիայի գործընթացի ներքո իրականացվող բարձրագույն կրթության փոփոխությունների ազդեցությունը բուհական կրթության որակի վրա: Մոնիտորինգի արդյունքների հիման վրա կմշակվեն բարձրագույն կրթության քաղաքականության ուղղված առաջարկություններ: Ծրագրի բյուջեն կկազմի 80,000 ԱՄՆ դոլար (40,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 40,000 ԱՄՆ դոլար 2016թ.):

«Կրթություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 360,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար

<p>2015թ. և 160,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>2015-16թթ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ միջոցառումներին.</p> <p>ա) 2015թ. և 2016թ. ամբողջ ծավալով կշարունակվի աջակցությունը ՀՀ Ոստիկանության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբին»: Խումբը իրականացնում է հասարակական վերահսկում ՀՀ Ոստիկանության համակարգում ձեռքարկված անձանց պահելու վայրերում: Խմբի անունից դրամաշնորհ ստացողը «Մեր իրավունքների սահմանները» հասարակական կազմակերպությունն է: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կազմելու է 50,000 ԱՄՆ դոլար (25,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 25,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>բ) 2015թ. և 2016թ. աշխատանքների ամբողջ ծավալով շարունակվելու է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու փակ հաստատությունների պայմանների բարելավման ծրագիրը: Ծրագիրն իրականացվելու է Արդարադատության նախարարության կողմից ստեղծված «Հասարակական դիտորդական խմբի» կողմից: Ծրագրի շրջանակներում Խումբը իրականացնելու է հասարակական վերահսկում քրեակատարողական հիմնարկներում: Խմբի անունից դրամաշնորհ ստացողը «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպությունն է: Ծրագրի բյուջեն երկու տարվա համար կազմելու է 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>գ) 2015թ. և 2016թ. «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում կաջակցի Հայաստանում օրենքի գերակայության և մարդու իրավունքների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների՝ իրականացնելու մշտադիտարկումներ հանրային կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների նկատմամբ: Աջակցություն կստանան նաև ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հասարակության տեղեկացվածության բարձրացմանը մեր երկրում ընթացող տարբեր բարեփոխումների մասին: Երկու տարվա ընթացքում դրամաշնորհի կարծանանան 5-6 հասարակական կազմակերպություն: Ծրագրի երկու տարվա բյուջեն կազմելու է 60,000 ԱՄՆ դոլար (30,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 30,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>դ) 2015թ. և 2016թ. շարունակվելու է «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակներում աջակցություն ցուցաբերվել «Ուզնավարական դատավարություն» ծրագրին, որը իրականացվում է ԲՀԻՕՀՀ-ի կողմից: Ծրագիրը նպաստում է իրավաբանական և փաստաբանական մասնագիտությունների զարգացմանը Հայաստանում: Ծրագրի ընթացքում նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ փաստաբանների համար՝ ընդգրկելով տեղացի և արտասահմանյան բարձրակարգ մասնագետներ: Ծրագրի երկու տարվա բյուջեն կազմելու է 30,000 ԱՄՆ դոլար (15,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 15,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p> <p>«Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի ընդհանուր բյուջեն երկու տարվա համար կազմելու է 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2016թ.):</p>
<p>10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p> <p>2015-16թթ. նախատեսվում է սարքավորումների, ապրանքների, գրքերի, ամսագրերի, CD, DVD-ների ներմուծում և ձեռքբերում, հեռահաղորդակցման և կապի ծառայությունների վարձավճարներից ԱՄՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱՄՀ-ից ազատում, գրասենյակային, ինչպես նաև կոմֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության, հյուրանոցային և այլ ծառայությունների ԱՄՀ-ից ազատում: CD-ները, DVD-ները,</p>

<p>գրքերը, ամսագրերը ծառայելու են ուսումնական, կրթական, մշակութային և գիտական նպատակների համար, տրամադրվելու են դպրոցներին, ԲՈՒՀ-երին, գրադարաններին, մշակութային և ստեղծագործական կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին: Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը ըստ տարիների ներկայացված է ստորև:</p>			
<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը</p>	<p>2015թ.. Քանակ/Ընդհանուր արժեքը</p>	<p>2016թ.. Քանակ/Ընդհանուր արժեքը</p>	<p>Ընդամենը</p>
<p>Երկրի ներսում ձեռք բերվող ապրանքներ և սարքավորումներ</p>	<p>1,000 ԱՄՆ դոլար</p>	<p>0 ԱՄՆ դոլար</p>	<p>1,000 ԱՄՆ դոլար</p>
<p>Երկրի ներսում ծառայություններ ա) հեռահաղորդակցման և կապի ծառայություններ բ) տպագրական ծախսեր գ) գրասենյակի վարձակալություն դ) կոմֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալություն ե) հյուրանոցային և այլ ծառայություններ զ) տարեկան հաշվետվության տպագրում է) թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն թ) կոմունալ ծախսեր ժ) տարեկան աուդիտ Ե) տրանսպորտային ծախսեր (վառելիք և պահեստամասեր)</p>	<p>4,400 ԱՄՆ դոլար 3,000 ԱՄՆ դոլար 12,000 ԱՄՆ դոլար 10,000 ԱՄՆ դոլար 3,000 ԱՄՆ դոլար 1,000 ԱՄՆ դոլար 300 ԱՄՆ դոլար 2,840 ԱՄՆ դոլար 30,000 ԱՄՆ դոլար 1,800 ԱՄՆ դոլար</p>	<p>4,400 ԱՄՆ դոլար 3,000 ԱՄՆ դոլար 12,000 ԱՄՆ դոլար 17,000 ԱՄՆ դոլար 9,000 ԱՄՆ դոլար 1,000 ԱՄՆ դոլար 300 ԱՄՆ դոլար 2,840 ԱՄՆ դոլար 30,000 ԱՄՆ դոլար 1,800 ԱՄՆ դոլար</p>	<p>8,800 ԱՄՆ դոլար 6,000 ԱՄՆ դոլար 24,000 ԱՄՆ դոլար 27,000 ԱՄՆ դոլար 12,000 ԱՄՆ դոլար 2,000 ԱՄՆ դոլար 600 ԱՄՆ դոլար 5,680 ԱՄՆ դոլար 60,000 ԱՄՆ դոլար 3,600 ԱՄՆ դոլար</p>
<p>Արտերկրից ներմուծվող համակարգիչների</p>	<p>5 հատ/2,000 ԱՄՆ դոլար</p>	<p>36 հատ/18,000 ԱՄՆ դոլար</p>	<p>20,000 ԱՄՆ դոլար դոլար</p>
<p>Արտերկրից ներմուծվող այլ</p>	<p>5 հատ/1,500 ԱՄՆ</p>	<p>5 հատ/1,500 ԱՄՆ</p>	<p>3,000 ԱՄՆ դոլար</p>



սարքավորումներ	դոլար	դոլար	
Արտերկրից ներմուծվող CD, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծում և ձեռքբերում	500 ԱՄՆ դոլար	500 ԱՄՆ դոլար	1,000 ԱՄՆ դոլար
Ընդամենը	73,340 ԱՄՆ դոլար	101,340 ԱՄՆ դոլար	174,680 ԱՄՆ դոլար

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը 2015-16թթ. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՅՅԱ) կողմից իրականացվող բոլոր ծրագրերի ընդհանուր կազմակերպական ծախսերը (աշխատավարձ, տարածքի վարձակալում, սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում, 2014-15թթ. ԲՀԻՕՅՅԱ-ի հաշվետվության տպագրում (2,000 ԱՄՆ դոլար էլեկտրոնային ֆորմատով), գործուղման ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ, և այլ գրասենյակային ծախսեր) կազմում են 190,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 102,000 ԱՄՆ դոլար 2016թ.), որը կազմում է ԲՀԻՕՅՅԱ-ի 2015-16թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 12,0%: Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ըստ տարիների ներկայացված է ստորև՝


Կազմակերպական ծախսեր	2015թ. Ընդհանուր արժեք	2016թ. Ընդհանուր արժեք	Ընդամենը
Աշխատավարձ	12,210 ԱՄՆ դոլար	15,660 ԱՄՆ դոլար	27,870 ԱՄՆ դոլար
Գրասենյակային տարածքի վարձակալում	12,000 ԱՄՆ դոլար	12,000 ԱՄՆ դոլար	24,000 ԱՄՆ դոլար
Կոմֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալություն և մասնակիցների գիշերակացի վճար	13,000 ԱՄՆ դոլար	8,000 ԱՄՆ դոլար	21,000 ԱՄՆ դոլար
Երկրի ներսրված թերվող ամրացված սարքավորումներ	1,000 ԱՄՆ դոլար	0 ԱՄՆ դոլար	1,000 ԱՄՆ դոլար
Արտերկրից ներմուծում	2,000 ԱՄՆ դոլար	18,000 ԱՄՆ դոլար	20,000 ԱՄՆ դոլար
Արտերկրից ներմուծում	0 ԱՄՆ դոլար	1,500 ԱՄՆ դոլար	3,000 ԱՄՆ դոլար



սարքավորումներ			
CD-ների, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծում և ձեռքբերում	500 ԱՄՆ դոլար	500 ԱՄՆ դոլար	1,000 ԱՄՆ դոլար
2014-15թթ. ԲՀԻՕՅՅԱ-ի հաշվետվության տպագրում էլեկտրոնային ֆորմատով	1,000 ԱՄՆ դոլար	1,000 ԱՄՆ դոլար	2,000 ԱՄՆ դոլար
Տպագրական ծախսեր	3,000 ԱՄՆ դոլար	3,000 ԱՄՆ դոլար	6,000 ԱՄՆ դոլար
Գործուղման ծախսեր	3,000 ԱՄՆ դոլար	3,000 ԱՄՆ դոլար	6,000 ԱՄՆ դոլար
Թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն	300 ԱՄՆ դոլար	300 ԱՄՆ դոլար	600 ԱՄՆ դոլար
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ	2,840 ԱՄՆ դոլար	2,840 ԱՄՆ դոլար	5,680 ԱՄՆ դոլար
Տրանսպորտային ծախսեր (վառելիք և պահեստամասեր)	1,800 ԱՄՆ դոլար	1,800 ԱՄՆ դոլար	3,600 ԱՄՆ դոլար
Միջազգային և տեղական հեռախոսակապ	1,400 ԱՄՆ դոլար	1,400 ԱՄՆ դոլար	2,800 ԱՄՆ դոլար
Բջջային հեռախոսակապ "Արմենտել" ՉՉ ՓԲԸ և "Օրանժ Արմենիա" ՓԲԸ	1,000 ԱՄՆ դոլար	1,000 ԱՄՆ դոլար	2,000 ԱՄՆ դոլար
Ինտերնետ - "Արմենիան Ղեթաքոմ Քամպին" ՓԲԸ	2,000 ԱՄՆ դոլար	2,000 ԱՄՆ դոլար	4,000 ԱՄՆ դոլար
Տարեկան ֆինանսական աուդիտի անցկացում - "Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա" ՓԲԸ	30,000 ԱՄՆ դոլար	30,000 ԱՄՆ դոլար	60,000 ԱՄՆ դոլար
Ընդամենը	88,550 ԱՄՆ դոլար	102,000 ԱՄՆ դոլար	190,550 ԱՄՆ դոլար

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ ԲՀԻՕՅՅԱ-ի ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է համագործակցություն՝ ՀՀ Ազգային ժողովի հետ՝ մի շարք օրենքների մշակման և ընդունման հարցերում մասնավորապես, Առողջապահության, մայրության և մանկության հարցերի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի, Պետաիրավական հարցերի և Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական համեմատողականների հետ: ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ Եվրոպական հարևանության քաղաքականության, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի և ԵՄ-ի Արևելյան գործընկերության ծրագրերի շրջանակներում մասնակցային գործընթացի ապահովման ուղղությամբ:

<p>ՀՀ Առողջապահության նախարարության հետ, կնքված փոխընթացման հուշագրի շրջանակներում, նախատեսվում է միջոցառումներ պալիատիվ խնամքի քաղաքականության մշակման, ինչպես նաև ծառայությունների մոդելների փորձնական իրականացման նպատակով, նաև վնասի նվազեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն թմրամիջոցներ օգտագործողների այլընտրանքային բուժման շարունակելիությունն ապահովելու նպատակով: Համագործակցությունը շարունակվելու է հետբուհական կրթական առողջապահական ծրագրերի շրջանակներում առողջապահական ոլորտի մասնագետների հետբուհական կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև ապագա բժիշկների և արդեն փորձ ունեցող բժիշկների համար իրավունքի և առողջապահության խնդիրների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ու անցկացման գործում, նաև պացիենտների և բժիշկների իրավունքների պաշտպանության և խնդիրների իրազեկման հարցերի շուրջ:</p> <p>Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ կնքված փոխընթացման հուշագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն հոգեկան առողջության Հայաստանի Ռազմավարության իրականացման շրջանակներում, որը ներառում է համայնքային կենտրոնների փորձնական հիմնադրման նախագծերի, ահրաժեշտ իրավական կարգավորումների մշակման և ոլորտի մի քանի կարևոր ուղղությունների կարիքների գնահատման աշխատանքներին աջակցում:</p> <p>ՀՀ Արդարադատության նախարարության հետ՝ դատաիրավական ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև նրանց կողմից ստեղծված քրեակատորդական հիմնարկների նկատմամբ հասարակական վերահսկման խմբի գործունեության աջակցության շրջանակներում: ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարին կից կոլեգիայի անդամ: Հիմնադրանքը հանդիսանում է ՀՀ Կրթության և գիտության նախարարին կից կոլեգիայի անդամ և, հնարավորինս, օգտագործում է այս մասնակցությունը՝ քննարկելու կրթության ոլորտում իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները:</p> <p>ՀՀ Ոստիկանության հետ համագործակցությունը տեղի է ունենում ոստիկանական համակարգի ձերբակալվածների պահման վայրերի նկատմամբ քաղաքացիական հսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի գործունեության աջակցման ծրագրի շրջանակներում:</p> <p>ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ՝ ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ-ում ՄԻԱՎՉԻԱԿ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների աշխատանքային խմբի անդամ: Այս կազմակերպության հետ համագործակցություն է հաստատվել նաև Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի հանրայնացման և ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունման գործընթացներն առավել արդյունավետ իրականացնելու շուրջ:</p> <p>Հայաստանում Եվրամիության պատվիրակության գրասենյակի հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանում մարդու իրավունքների և շահերի պաշտպանության և այդ ոլորտում միջազգային նորմերի ներդրմանն ու կիրառմանը: ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակ է հանդիսանում նաև Արևելյան գործընկերության ձևաչափը:</p> <p>Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան և Բրիտանական խորհրդի, ԵԱԿԿ երևանյան գրասենյակի, Հայաստանում Նիդեռլանդների դեսպանատան (նստավայրը Թբիլիսի) հետ համագործակցում է Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար նպատակների պաշտպանության առավել արդյունավետ իրականացնելու գաղափարների, դրանց մասին լայն հանրությանը տեղեկացնելու շուրջ:</p>	<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը - ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի</p>
---	--

<p>իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀՄ-ի գործադիր տնօրենի, գ) ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի, դ) ցանցային գլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ) գրասենյակների: Վերահսկման եղանակներն են.</p> <ul style="list-style-type: none"> - Բաց հասարակության ինստիտուտի գլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսական ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում; - Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ; - Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի կողմից իրականացվում է ԲՀԻՕՀՀՄ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտը, որի արդյունքները կանցվում է KPMG-ի կողմից); - ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման, հանրաժողովի և վերահսկողության միջոցով եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի; - Պարբերական տեղեկատվության էլեկտրոնային հրատարակում; - Ամենամյա տարեկան հաշվետվության էլեկտրոնային ներկայացում: 	
---	--



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1038 -Ա
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ի նիստին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱՂԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱՔՈՒԺԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՌՎ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/23723-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N ՎՀ/22.2/11134-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի N 06/3-8/30825 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մաղայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 1.30 գրությունը, որոշում է.

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նադիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մաղայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ՝ 4 տեղ, 91 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մաղայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝

սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հոկտեմբերի 2016 թվականի N Մ- 1039 -Ա
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ի նիստին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N5)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 01.1/80-2/24286-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N ԱԲ/22.2/11551-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի N 06/3-8/32158-16 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ֆրանսիական Զարգացման գիտահետազոտական ինստիտուտի (IRD) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (12 հատ ստերեոմանրադիտակ՝ 2 տեղ, 35 կգ ընդհանուր քաշով, 2,628 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 512.60 եվրո, իսկ ապահովագրության ծախսերը՝ 22.34 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1040 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

- 1) կակաչի սոխուկներ՝ 861 տեղ, 16,366 կգ մաքուր քաշով, 41,456.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» Տ/Մ.
- 2) խոտի սերմ՝ 4 տեղ, 3,000 կգ մաքուր քաշով, 18,080 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ.
- 3) մարգական սարքեր և մանկական խաղահրապարակներ՝ 882 տեղ, 41,440 կգ ընդհանուր քաշով, 376,659.92 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 28,040 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

ՆԱԽԱԳԱԾ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

25 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1041 - Ա

(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ին)


քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1
(«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 01.1/80-2/24287-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N ԱԲ/22.2/11552-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հոկտեմբերի 21-ի N 06/3-8/32021-16 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Հայաստան Արցախ» հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված դեղորայքը (մեկ տեղ, 8.5 կգ ընդհանուր քաշով, 6,544.88 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 915 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1042 - Ա

(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 21-ին)

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 01.1/80-2/24080-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 06/3-8/31505-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Բրիտանական խորհուրդի հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00112853) 2016 թվականի հունիսի 1-ին կնքված՝ աշխատանքային համագործակցության համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում անգլերեն լեզվի դասավանդում և ուսուցում՝ 810,146 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

31 հոկտեմբերի 2016 թվականի N Մ - 1043 - Ա

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-075-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՄԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(«Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան»
հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն մանկական հաստատություններում և ցերեկային կենտրոններում գտնվող ծնողագուրկ ու ֆիզիկական, մտավոր արատներ ունեցող երեխաներին» ծրագրի մասին» N Մ-075-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերի 8-րդ ենթակետում (2016 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-853-Ա որոշման խմբագրությամբ) «21,000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ» բառերը փոխարինել «24,150 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ» բառերով:

2. Սահմանել, որ «Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից ձեռք բերված միկրոավտոբուսը (2016 թվականի, TOYOTA HIACE BUS, շասի համարը՝ JTGJS02P4G5034404, 23,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 950 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ